ՍՏԵՓԱՆ ՀԱՍԱՆ-ԶԱԼԱԼՅԱՆ
ԷԴՈՒԱՐԴ ԶՈՀՐԱԲՅԱՆ

ՆԱԽԿԻՆ ԼՂԻՄ-Ի ԵՎ ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ «ՄԱԴՐԻԴՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ»-ՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i64.95

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածի նպատակն է, հիմնվելով հարցին վերաբերող աղբյուրների վրա, պարզել ադրբեջանաարցախյան հակամարտության կարգավորման նպատակով ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից հակամարտության կողմերին ներկայացված «Մադրիդյան սկզբունքներ»-ում Արցախի Հանրապետության ազգային, պետական շահերին դեմ ձևակերումները:

Դրված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝ 1. որո՞նք են «Մադրիդյան սկզբունքներ»-ում ամրագրված այն հիմնական առաջարկությունները, որոնց հիման վրա պետք է կարգավորվեր ադրբեջանաարցախյան հակամարտությունը, 2. ի՞նչ դիրքորոշում են ունեցել հակամարտության կողմերը «Մադրիդյան սկզբունքներ»-ի վերաբերյալ, 3. ի՞նչ կարգավիճակ էր տրվելու նախկին ԼՂԻՄ-ին և ազատագրված տարածքներին «Մադրիդյան սկզբունքներ»-ով, 4. ինչպե՞ս էր իրացնելու ինքնորոշման իր իրավունքը Արցախի հայությունը «Մադրիդյան սկզբունքներ»-ով, 5. ի՞նչ դիրքորոշում են ունեցել ՀՀ նախկին նախագահները ԼՂԻՄ-ի և ազատագրված տարածքների հետագա կարգավիճակի վերաբերյալ:

Հոդվածը շարադրված է համապատասխան փաստաթղթերի համադրման ու համեմատական ուսումնասիրության և քննական վերլուծության միջոցով:

Հարցին վերաբերելի փաստերի ու փաստաթղթերի համադիր քննության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ ադրբեջանաարցախյան հակամարտության կարգավորման նպատակով ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից հակամարտության կողմերին ներկայացված «Մադրիդյան սկզբունքներ» անունով հայտնի փաստաթուղթը գերակշիռ չափով դեմ է Արցախի Հանրապետության ազգային, պետական շահերին:

Բանալի բառեր և արտահայտություններ. *«Մադրիդյան սկզբունքներ», Արցախի Հանրապետություն, հանրաքվե, ԼՂԻՄ, մարդահամար, անկախ միջազգային դիտորդ, “Момент истины” հաղորդաշար, «Ալ Ջազիրա» հեռուստաընկերություն, “Al Watan” թերթ, “Россия сегодня” միջազգային լրատվական գործակալություն, “Комсомольская правда” թերթ:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանաարցախյան հակամարտությունը ծագելուց հետո եղել են բազմաթիվ փորձեր կարգավորելու տվյալ կոնֆլիկտը, սակայն բոլոր փորձերը ձախողվել են, դրանցից ոչ մեկը չի ապահովել ցանկալի արդյունք:

Սույն հոդվածում կանդրադառնանք այդ փորձերից մեկին՝ ադրբեջանաարցախյան հակամարտության կարգավորման նպատակով ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից հակամարտության կողմերին ներկայացված առաջարկությանը, որը հակամարտության կարգավորման պատմության մեջ առավել հայտնի է «Մադրիդյան սկզբունքներ» անունով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածը շարադրված է թեմային վերաբերող սկզբնաղբյուրների, փաստաթղթերի համադրման, համեմատական ուսումնասիրության և պատմաքննական վերլուծության միջոցով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

2007թ. նոյեմբերի 29-30-ը Իսպանիայի մայրաքաղաք Մադրիդում իր աշխատանքներն է սկսել և ավարտել ԵԱՀԿ նախարարների խորհուրդը: Նախքան նախարարների խորհրդի աշխատանքների մեկնարկը ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Նիկոլաս Բերնսը, Ֆրանսիայի և Ռուսաստանի արտաքին գործերի

նախարարներ Բեռնար Քուշները և Սերգեյ Լավրովը Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարներ Վարդան Օսկանյանին ու Էլմար Մամեդյարովին են հանձնել ադրբեջանաարցախյան հակամարտության կարգավորման հիմնարար սկզբունքների մասին փաստաթուղթ Հայաստանի և Ադրբեջանի նախագահներին փոխանցելու համար (https://www.osce.org/mg/49237): Փաստաթուղթն առավել հայտնի է «Մադրիդյան սկզբունքներ» անունով:

«Մադրիդյան սկզբունքներ»-ը գաղտնազերծվել է 2016թ. ապրիլի 14-ին (https://www.aniarc.am/2016/04/14/madrid-principals-armenian-text/):

Հակամարտության կարգավորման պատմության ընթացքում առաջին անգամ փաստաթղթում ամրագրվել են 1975թ. օգոստոսի 1-ին ընդունված ԵԱՀԿ հելսինկյան եզրափակիչ ակտում արձանագրված միջազգային իրավունքի տասը հիմնարար սկզբունքներից երեքը, որոնց հիման վրա պետք է կարգավորվեր ադրբեջանաարցախյան հակամարտությունը, դրանք են՝

- ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառման բացառում,
- ժողովուրդների իրավահավասարություն և ինքնորոշման իրավունք,
- պետությունների տարածքային ամբողջականություն:

Բացի վերոնշյալ կարևոր արձանագրումներից, փաստաթղթի նախագծում ամրագրվել են նաև հետևյալ առանցքային դրույթները՝

- Լեռնային Ղարաբաղի (նկատի է առնվում նախկին ԼՂԻՄ-ի տարածքը – Ս. Հ.-Ջ.) վերջնական իրավական կարգավիճակը որոշվելու է կոնֆլիկտի կողմերի կողմից ապագա բանակցություններում որոշվելիք ժամկետներում անցկացվելիք հանրաքվեի (պլեբիսցիտի) միջոցով, որը Լեռնային Ղարաբաղի բնակչությանը կընձեռի կամքի ազատ և իրական արտահայտում: Լեռնային Ղարաբաղի բնակչություն ասելով հասկացվում է 1988թ. դրությամբ ԼՂԻՄ-ում ապրող բոլոր ազգերը այնպիսի էթնիկ համամասնությամբ, ինչպես եղել է մինչև հակամարտության սկիզբը:
- Լեռնային Ղարաբաղին հարակից ադրբեջանական բոլոր տարածքները, որոնք գտնվում են հայկական վերահսկողության տակ, վերադարձվելու են ադրբեջանական վերահսկողության տակ:

- Համաձայնեցված լայնքի միջանցքը պետք է Լեռնային Ղարաբաղը կապի Հայաստանի Հանրապետության հետ:
- Բոլոր ներքին տեղահանված անձինք և փախստականները իրավունք են ստանում կամավոր վերադառնալ իրենց բնակության նախկին վայրերը:
- Հայկական զինուժի դուրս բերումից հետո տվյալ շրջանների անվտանգությունն ապահովելու նպատակով տեղակայվելու են միջազգային խաղաղապահ ուժեր (https://www.aniarc.am/2016/04/14/madrid-principals-armenian-text/):

Ադրբեջանաարցախյան հակամարտությունը «Մադրիդյան սկզբունքներ»-ի համաձայն կարգավորելու նպատակով իրենց համաձայնությունը տվել են Հայաստանը (https://www.aniarc.am/2016/12/28/serzh-sargsyan-28-december-2016/) և Ադրբեջանը (https://ria.ru/20100609/244297340.html):

Ինչ վերաբերում է Արցախի Հանրապետությանը, ապա պաշտոնական Ստեփանակերտը երկար ժամանակ կարծիք չէր հայտնում նշված փաստաթղթի վերաբերյալ՝ պատճառաբանելով, որ պաշտոնապես չի ստացել փաստաթուղթը (https://www.azatutyun.am/a/25472849.html): Միայն 2014 թվականի հուլիսի 27-ին Արցախի Հանրապետության վարչապետ Արայիկ Հարությունյանն առցանց հարցուպատասխանի ժամանակ հայտարարեց, որ Արցախի համար անընդունելի են «Մադրիդյան սկզբունքներ»-ը (https://www.youtube.com/watch?v=d8VB_uENrBs):

Փաստաթղթին հայկական կողմի, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության տված համաձայնության համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ «Մադրիդյան սկզբունքներ»-ի այն ձևակերպումներին, որոնք դեմ են Արցախի Հանրապետության ազգային, պետական շահերին:

Համաձայն «Մադրիդյան սկզբունքներ»-ի առաջին սկզբունքի՝ «ԼՂ վերջնական իրավական կարգավիճակը կորոշվի պլեբիսցիտի միջոցով, որը ԼՂ բնակչությանը ընձեռում է կամքի ազատ և իրական արտահայտում: Պլեբիսցիտի ժամկետներն ու մանրամասները կողմերը կհամաձայնեցնեն ապագա բանակցություններում,...» (https://www.aniarc.am/2016/04/14/madrid-principals-armenian-text/):

Փաստորեն, Հայաստանի Հանրապետությունը համաձայնվել է նախկին ԼՂԻՄ-ի տարածքի պետական-իրավական կարգավիճակի հարցով ներկայիս Արցախի Հանրապետությունում (նախկին ԼՂԻՄ-ում) անորոշ ապագայում կրկնակի հանրաքվե անցկացնելու մասին առաջարկին:

Ինչո՞ւ է Հայաստանը համաձայնել նման ձևակերպման հետ. չէ՞ որ Արցախի պետական-իրավական կարգավիճակի հարցով Արցախում արդեն անցկացվել է հանրաքվե: Եթե Հայաստանը համաձայնել է Արցախի պետական-իրավական կարգավիճակի հարցով Արցախում անորոշ ապագայում հանրաքվե անցկացնելու մասին առաջարկին, ապա հարց է առաջանում՝ ի՞նչ վերաբերմունք պետք է ունենալ Արցախի Հանրապետության անկախության հարցով 1991թ. դեկտեմբերի 10-ին ԽՍՀՄ և միջազգային իրավական ակտերի համաձայն ու այդ ակտերի բծախնդիր պահպանմամբ Արցախի Հանրապետությունում անցկացված անկախության հանրաքվեի վերաբերյալ:

Եթե կարող է հարց առաջանալ 1991թ. դեկտեմբերի 10-ին Արցախում անցկացված անկախության հանրաքվեի և դրա արդյունքների լեգիտիմության հետ կապված՝ պայմանավորված հանրաքվեին ԼՂԻՄ-ում ապրած ադրբեջանցի փոքրամասնության չմասնակցելու հանգամանքով, ապա այդ հարցն ունի հետևյալ հիմնավոր պատասխանը. հանրաքվեին մասնակցությունը մարդու իրավունքն է և ոչ թե պարտականությունը: ԼՂԻՄ-ի ադրբեջանցի փոքրամասնությունը որոշել է օգտվել հանրաքվեին չմասնակցելու իր իրավունքից և չի մասնակցել:

Նույնիսկ եթե ԼՂԻՄ-ի ադրբեջանցի փոքրամասնությունը մասնակցեր այդ հանրաքվեին և բոլորը մեկ մարդու նման դեմ քվեարկեին Արցախի Հանրապետության անկախությանը, ապա դա չէր կարող էական ազդեցություն ունենալ հանրաքվեի վերջնական արդյունքների վրա, քանի որ համաձայն ԽՍՀՄ-ում անցկացված վերջին մարդահամարի տվյալների՝ 1989թ. հունվարի 1-ի դրությամբ ԼՂԻՄ-ում բնակվել է 189.100 մարդ, որից 145.500-ը կամ ընդհանուր բնակչության 76.9%-ը եղել են հայեր, 40.700-ը կամ ընդհանուր բնակչության 21.5%-ը՝ ադրբեջանցիներ, 1900-ը կամ ընդհանուր բնակչության 1%-ը՝ ռուսներ և 1000

հոգի՝ այլ ազգի ներկայացուցիչներ, որը կազմել է ընդհանուր բնակչության 0.5%-ը (http://census.stat-nkr.am/nkr/pervaya_perepis.pdf):

Այսպիսով, Արցախի Հանրապետության անկախության հանրաքվեին ԼՂԻՄ-ի ադրբեջանցի փոքրամասնության չմասնակցելու փաստը որևէ կերպ չի կարող կասկած հարուցել հանրաքվեի և դրա արդյունքների լեգիտիմության առումով: Ասվածին հարկ ենք համարում հավելել նաև հետևյալը. 1991թ. դեկտեմբերի 10-ին Արցախում անցկացված անկախության հանրաքվեին հետևել են չորս տասնյակ անկախ միջազգային դիտորդներ: Դիտորդները եղել են Հայաստանի Հանրապետությունից, Ռուսաստանից, Բուլղարիայից, Ֆրանսիայից, Մեծ Բրիտանիայից, ԱՄՆ-ից, Իսպանիայից և Ուկրաինայից: Հանրաքվեից անմիջապես հետո անկախ միջազգային դիտորդները հրապարակել են «Ակտ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հարցով հանրաքվեի արդյունքների վերաբերյալ», որտեղ արձանագրել են, որ իրենք հանրաքվեի ընթացքին հետևել են Ստեփանակերտում, Շահումյանի, Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու և Հադրութի շրջաններում: Անկախ դիտորդները հայտնել են, որ քվեաթերթիկները տպագրվել են երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և ադրբեջաներեն: Անկախ դիտորդներն արձանագրել են նաև, որ իրենք հետևել են և՛ հանրաքվեի ընթացքին, և՛ ձայները հաշվելու պրոցեսին և որևէ խախտում չեն արձանագրել: Դիտորդները միաժամանակ նշել են, որ «…հանրաքվեն անցկացվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ (Ադրբեջանի կողմից իրականացվող – Ս. Հ.-Ջ.) ռազմական ագրեսիայի պայմաններում, որն արտահայտվել է Ստեփանակերտի և այլ բնակավայրերի չդադարող հրետակոծություններով տարբեր զինատեսակների կիրառմամբ, ներառյալ հրթիռներ և հրետանի: Քվեարկության օրը հրետակոծություններից զոհվել են 10, վիրավորվել 11 հայեր: Ստեփանակերտ քաղաքի կանանց և երեխաների մեծ մասը գիշերում է նկուղներում, փակ են մանկապարտեզները, դպրոցները:… Պայթեցվել է քաղաքի ջրամատակարարման ցանցը, չկա հաց, դեղորայք» (https://nashasreda.ru/akt-o-rezultatax-referenduma-o-nezavisimosti-nagorno-karabaxskoj-respubliki/):

Արցախի Հանրապետության հետագա պետական-իրավական կարգավիճակի հարցով Արցախի Հանրապետությունում երկրորդ անգամ հանրաքվե անցկացնելու մասին գաղափարը և ցավալիորեն դրա՝ որպես առաջարկության ամրագրումը «Մադրիդյան սկզբունքներ» կոչվող փաստաթղթում, ինչպես նաև այդ առաջարկության ընդունումը Հայաստանի Հանրապետության կողմից, նշանակում է չճանաչել որպես կայացած փաստ 1991թ. դեկտեմբերի 10-ին Արցախի Հանրապետությունում անցկացված անկախության հանրաքվեն և 1992թ. հունվարի 6-ին Արցախի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից հաստատված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին» հռչակագիրն ու Արցախի Հանրապետության Սահմանադրությունը, որի նախաբանում հիշատակված է անկախության հռչակագիրը:

Հետևաբար «Մադրիդյան սկզբունքներ»-ի առաջին սկզբունքը, ըստ որի «ԼՂ վերջնական իրավական կարգավիճակը կորոշվի պլեբիսցիտի միջոցով… Պլեբիսցիտի ժամկետներն ու մանրամասները կողմերը կհամաձայնեցնեն ապագա բանակցություններում,…» դեմ է Արցախի Հանրապետության ազգային, պետական շահերին: «Մադրիդյան սկզբունքներ»-ում հաջորդ խնդրահարույց ձևակերպումն արձանագրված է փաստաթղթի երրորդ սկզբունքի մեջ, որը հետևյալն է. «ԼՂ-ին հարակից ադրբեջանական բոլոր տարածքները, որոնք գտնվում են հայկական վերահսկողության տակ, վերադարձվելու են ադրբեջանական վերահսկողության տակ…» (https://www.aniarc.am/2016/04/14/madrid-principals-armenian-text/):Ի՞նչ հարակից տարածքների մասին է խոսքը: Արցախի Հանրապետությունը չի ունեցել իրեն հարակից և իր վերահսկողության տակ գտնվող ադրբեջանական տարածքներ, որ վերադարձնի ադրբեջանական վերահսկողությանը: Ինչո՞ւ Հայաստանի Հանրապետությունը չի առարկել նման ձևակերպմանը և չի ներկայացրել անհրաժեշտ պարզաբանումներ: Այս հարցի պատասխանը գտնում ենք Արցախի և Հայաստանի Հանրապետությունների նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի՝ Արցախի և Հայաստանի ղեկավարների պաշտոններում պաշտոնավարման ընթացքում տված որոշ հարցազրույցներում:

Այսպես, Արցախի Հանրապետության վարչապետ և պաշտպանության պետական կոմիտեի նախագահ Ռոբերտ Քոչարյանը 1994թ. հունվարի 10-ին հարցազրույց է տվել ռուսալեզու “Момент истины” հաղորդաշարին և մասնավորապես ասել հետևյալը. «Մենք բազմիցս հայտարարել ենք և շարունակում ենք հայտարարել, որ այդ տարածքները վերահսկում ենք զուտ ռազմական իմաստով: Եվ պատերազմի ավարտից, թշնամական գործողությունները դադարելուց հետո այդ տարածքները վերադարձվելու են» (https://www.youtube.com/watch?v=N8hkL04gVNA):

Նշված տեսակետը նա վերահաստատել է նաև որպես Հայաստանի Հանրապետության նախագահ: 2006թ. սեպտեմբերի 28-ին արաբական «Ալ Ջազիրա» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում Ռոբերտ Քոչարյանը մասնավորապես ասել է. «Ղարաբաղի վարչական սահմաններից դուրս կան հողեր, որոնք գրավված են հայկական ուժերի կողմից: Բազմիցս ասել ենք, որ բացի Հայաստանի և Ղարաբաղի միջև գտնվող Լաչինի նեղ հողաշերտից, մենք պատրաստ ենք քննարկել տարածքները Ադրբեջանին վերադարձնելու պայմանները:» (https://www.aniarc.am/2020/04/22/robert-kocharian-al-jazeera-2006-nk/):

Մեջբերումից պարզ է դառնում, որ Ռոբերտ Քոչարյանը՝ սկզբում որպես Արցախի Հանրապետության վարչապետ և պաշտպանության պետական կոմիտեի նախագահ, այնուհետև Հայաստանի Հանրապետության նախագահ՝ համապատասխանաբար 1994թ. հունվարին և 2006թ. սեպտեմբերին հրապարակային կերպով պատրաստակամություն է հայտնել պատմականորեն և իրավունքի ուժով Արցախին պատկանող, ազատագրված տարածքները հանձնել Ադրբեջանին:

Ազատագրված, արցախապատկան տարածքներն Ադրբեջանին հանձնելուն կողմ է արտահայտվել նաև ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյան: 2010թ. մարտի 22-ին նա հարցազրույց է տվել սիրիական “Al Watan” թերթին, որտեղ մասնավորապես ասել է. «Երբ Ղարաբաղի ժողովուրդը ստանա իր ինքնորոշման իրավունքն իրագործելու իրական հնարավորություն և ստեղծվեն անվտանգության

և զարգացման գործնական մեխանիզմներ, հայկական կողմի փոխզիջում կարող է դիտվել Ղարաբաղի շուրջ գտնվող այդ շրջանների վերադարձը Ադրբեջանին՝ իհարկե, պահպանելով Լեռնային Ղարաբաղն ու Հայաստանը կապող միջանցքը: Ես բազմիցս հայտարարել եմ այդ մասին:» (https://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2010/03/22/news-46/):

Ազատագրված, պատմականորեն և իրավունքի ուժով արցախապատկան տարածքներն Ադրբեջանին հանձնելու մասին իր մոտեցումը Հայաստանի Հանրապետության երրորդ նախագահը վերահաստատել է մեկ այլ հարցազրույցում: 2016թ. նոյեմբերի 17-ին նա հարցազրույց է տվել “Россия сегодня” միջազգային լրատվական գործակալության գլխավոր տնօրեն Դմիտրի Կիսելյովին, որտեղ մասնավորապես ասել է հետևյալը. «Մենք հանդիպեցինք Մայենդորֆում և ստորագրեցինք փաստաթուղթ, որի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի խնդիրը պետք է լուծվի միայն քաղաքական ճանապարհով: Հետո բանակցային գործընթացը շարունակվեց, և մենք մի քանի անգամ մոտ էինք այն փաստաթուղթը ստորագրելուն, որտեղ բոլոր այդ սկզբունքները հստակ արտացոլված էին: Այսինքն՝ հայկական կողմերը՝ Լեռնային Ղարաբաղն ու Հայաստանը, թողնում են այն տարածքները, որոնք վերցված են որպես անվտանգության գոտի, այն տարածքները, որոնք ադրբեջանցիներն անվանում են բռնազավթված: Թողնում ենք տարածքները, հեռանում:» (https://www.youtube.com/watch?v=uSKWnz7ajqE):

Մեջբերումից պարզվում է, որ ՀՀ երրորդ նախագահը նույնպես կողմ է արտահայտվել ազատագրված, պատմականորեն և իրավունքի ուժով արցախապատկան տարածքներն Ադրբեջանին հանձնելուն:

Հարկ է նշել, որ ազատագրված, պատմականորեն և իրավունքի ուժով արցախապատկան տարածքներն Ադրբեջանին հանձնելուն կողմ է եղել նաև ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: Ավելին. վերջինս նաև համաձայն է եղել, որ նախկին ԼՂԻՄ-ի տարածքն ինքնավար հանրապետության կարգավիճակով գտնվի Ադրբեջանի կազմում: Այս մասին տեղեկանում ենք Լևոն Տեր-Պետրոսյանի ՀՀ նախագահի պաշտոնում պաշտոնավարման ընթացքում

տված մի հարցազրույցից: 1992թ. մարտի 5-ին նա հարցազրույց է տվել “Комсомольская правда” ռուսալեզու թերթին և մասնավորաբար ասել հետևյալը. “Хотелось бы думать, что статус автономной республики в составе Азербайджана полностью удовлетворил бы все стороны, вед при этом Карабах остается в составе Азербайджана, территориальная целостность республики сохраняется, а карабахцы, в свою очередь, имеют гарантированную жизнидеятельность. Вот наша позиция. Мы готовы ее обсуждать на любом уровне.” (Газета “Комсомольская правда” (1992)).

Բացասական առումով ստանում ենք հետևյալ պատկերը. ՀՀ առաջին նախագահը կողմ է եղել, որ ազատագրված, պատմականորեն և իրավունքի ուժով Արցախին պատկանող տարածքները հանձնվեն Ադրբեջանին, իսկ նախկին ԼՂԻՄ-ի տարածքն ինքնավար հանրապետության կարգավիճակով գտնվի Ադրբեջանի կազմում: ՀՀ երկրորդ և երրորդ նախագահները կողմ են եղել, որ ազատագրված, պատմականորեն և իրավունքի ուժով արցախապատկան տարածքները հանձնվեն Ադրբեջանին, իսկ նախկին ԼՂԻՄ-ի տարածքի պետական-իրավական կարգավիճակը որոշվի անորոշ ապագայում անցկացվելիք հանրաքվեով: Այս պարագայում հարց է առաջանում. կարո՞ղ ենք վկայակոչել օկուպանտ և ցեղասպան Ադրբեջանի որևէ ղեկավարի որևէ հրապարակային հայտարարություն, որտեղ տվյալ ղեկավարը հայտարարի, որ Ադրբեջանը ճանաչում է Արցախի Հանրապետության անկախությունը, կամ կողմ է, որ Ադրբեջանի կողմից օկուպացված Արցախի Հանրապետության այս կամ այն տարածքը վերադարձվի Արցախին: Դժբախտաբար անհնար է վկայակոչել մի այդպիսի հայտարարություն: Ո՛չ օկուպանտ և ցեղասպան Ադրբեջանի առաջին նախագահ Այազ Մութալիբովը, ո՛չ երկրորդ նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը, ո՛չ երրորդ նախագահ Հեյդար Ալիևը և ոչ էլ վերջինիս որդին՝ Ադրբեջանի չորրորդ նախագահ՝ օկուպանտ և ցեղասպան Իլհամ Ալիևը, երբևէ նմանաբովանդակ հայտարարություններ չեն արել:

1991-1994թթ. ընթացքում տեղի ունեցած ադրբեջանաարցախյան առաջին պատերազմի արդյունքում Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի և պատերազմին ՀՀ-ից մասնակցած կամավորական ջոկատների կողմից

ադրբեջանական օկուպացիայից ազատագրված տարածքները թե՛ պատմական և թե՛ իրավական առումներով ամբողջությամբ արցախապատկան տարածքներ են, որոնք Խորհրդային Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի կովկասյան բյուրոյի 1921 թվականի հուլիսի 5-ի ապօրինի «որոշմամբ» պետք է մտնեին ԼՂԻՄ-ի վարչական սահմանների մեջ: Սակայն Խորհրդային Ադրբեջանի կենտրոնական գործադիր կոմիտեի 1923 թվականի հուլիսի 7-ի դեկրետով նշված տարածքներն ապօրինաբար մտցվել են Խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ (Нагорный Карабах в 1918-1923гг., 1992):

Հարկ ենք համարում պնդել, որ «Մադրիդյան սկզբունքներ»-ի երրորդ սկզբունքի մեջ պատմականորեն և իրավունքի ուժով Արցախին պատկանող, ազատագրված տարածքներն Ադրբեջանին վերադարձնելու մասին ձևակերպումը նույնպես դեմ է Արցախի Հանրապետության ազգային, պետական շահերին:

Ավարտելով՝ հարկ ենք համարում ասվածին հավելել նաև հետևյալը. «Մադրիդյան սկզբունքներ»-ը հակամարտության կարգավորմամբ զբաղվող ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից հակամարտության կողմերին ներկայացված առաջին առաջարկությունն է, որտեղ ինքնորոշում ասելով նկատի էր առնվում նախկին ԼՂԻՄ-ի տարածքի ինքնորոշում նաև Ադրբեջանի կազմից դուրս: Նախորդ բոլոր առաջարկությունների դեպքում նախկին ԼՂԻՄ-ի տարածքը համարվել է Ադրբեջանի տարածքային ամբողջականության մաս:

Նախկին ԼՂԻՄ-ի տարածքի՝ Ադրբեջանի կազմից դուրս ինքնորոշման մասին է վկայում «Մադրիդյան սկզբունքներ»-ի առաջին սկզբունքի հետևյալ ձևակերպումը. «Պլեբիսցիտի ընթացքում հարցի կամ հարցերի ձևակերպման սահմանափակում չի լինելու և կարող է թույլ տալ յուրաքանչյուր կարգավիճակի հնարավորություն» (https://www.aniarc.am/2016/04/14/madrid-principals-armenian-text/):

Մեջբերումից պարզվում է, որ անորոշ ապագայում տեղի ունենալիք հանրաքվեի ընթացքում քվեաթերթիկում կարող է ձևակերպված լինել նաև նախկին ԼՂԻՄ-ին անկախ կարգավիճակի հնարավորություն տվող հարցադրում: Եվ եթե 1988թ. ազգային համամասնությամբ ԼՂԻՄ-ում ապրող բոլոր ազգերը,

այնպիսի էթնիկ համամասնությամբ, ինչպես եղել է մինչև հակամարտության սկիզբը, մասնակցեին նշված հանրաքվեին և մեծամասնությունը կողմ քվեարկեր նախկին ԼՂԻՄ-ի տարածքին անկախ կարգավիճակի հնարավորություն տվող հարցադրմանը, ապա նախկին ԼՂԻՄ-ի տարածքը ձեռք կբերեր անկախություն: Այսինքն՝ ինքնորոշվելով նախկին ԼՂԻՄ-ի տարածքը կարող էր ունենալ անկախ պետության կարգավիճակ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ամփոփելով իրավական փաստերի ու փաստաթղթերի հիման վրա կատարված վերլուծությունը՝ կարող ենք պնդել, որ ադրբեջանաարցախյան հակամարտության կարգավորման նպատակով ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից հակամարտության կողմերին ներկայացված «Մադրիդյան սկզբունքներ» անունով հայտնի փաստաթուղթը գերակշիռ չափով դեմ է Արցախի Հանրապետության ազգային, պետական շահերին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. OSCE Minsk Group Co-Chairs issue statement on Nagorno-Karabakh, https://www.osce.org/mg/49237.
2. Հայկական ուսումնասիրությունների «Անի» կենտրոն, Մադրիդյան սկզբունքներ – ամբողջական տեքստ, https://www.aniarc.am/2016/04/14/madrid-principals-armenian-text/:
3. Մադրիդյան սկզբունքները Հայաստանը ընդունել է բանակցությունների հիմք. Սարգսյան, https://www.aniarc.am/2016/12/28/serzh-sargsyan-28-december-2016/:
4. Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի տված հարցազրույցը ադրբեջանական ԶԼՄ-ներին 2010թ. հունիսի 8-ին Ստամբուլում, https://ria.ru/20100609/244297340.html:
5. Մադրիդյան սկզբունքները անընդունելի են Ղարաբաղի համար, https://www.azatutyun.am/a/25472849.html:

6. Առցանց հարցուպատասխան ԱՀ վարչապետ Արայիկ Հարությունյանի հետ #2 - մաս 3, https://www.youtube.com/watch?v=d8VB_uENrBs: Դիտել հարցազրույցի 5ր. 27վ. – 6ր. 01վ. հատվածը:
7. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչության թվաքանակի դինամիկան ըստ ազգության՝ մարդահամարների արդյունքներով, http://census.stat-nkr.am/nkr/pervaya_perepis.pdf, էջ 20; Население Нагорного Карабаха, Нагорно-Карабахская АО (1989г.), http://www.ethno-kavkaz.narod.ru/rnkarabax.html.
8. Акт о результатах референдума о независимости Нагорно-Карабахской республики, https://nashasreda.ru/akt-o-rezultatax-referenduma-o-nezavisimosti-nagorno-karabaxskoj-respubliki/.
9. Արցախի Հանրապետության վարչապետ և պաշտպանության պետական կոմիտեի նախագահ Ռոբերտ Քոչարյանի 1994թ. հունվարի 10-ի հարցազրույցը “Момент истины” ռուսալեզու հաղորդաշարին, https://www.youtube.com/watch?v=N8hkL04gVNA: Դիտել հարցազրույցի 3ր. 00վ. - 3ր. 18վ. հատվածը:
10. Հայկական ուսումնասիրությունների «Անի» կենտրոն, Ռոբերտ Քոչարյանի Արցախյան կարմիր գծերը. Լաչինի նեղ հողաշերտ+նախկին ԼՂԻՄ, https://www.aniarc.am/2020/04/22/robert-kocharian-al-jazeera-2006-nk/:
11. ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի 2010թ. մարտի 22-ի հարցազրույցը սիրիական “Al Watan” թերթին, https://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2010/03/22/news-46/:
12. ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի 2016թ. նոյեմբերի 17-ի հարցազրույցը “Россия сегодня” միջազգային լրատվական գործակալության գլխավոր տնօրեն Դմիտրի Կիսելյովին,https://www.youtube.com/watch?v=uSKWnz7ajqE: Դիտել հարցազրույցի 11ր. 50վ. – 14ր. 30վ. հատվածը: Հարցազրույցի սղագրությունը՝ https://armeniasputnik.am/20161117/serj-sargsyan-5509588.html:

13. Газета “Комсомольская правда” (1992), Москва, 5 марта, с. 2.
14. Нагорный Карабах в 1918-1923гг. (1992), Сборник документов и материалов, Ереван, “Изд. АН Армении”, док. N 472, с. 669-670.

REFERENCES

1. OSCE Minsk Group Co-Chairs issue statement on Nagorno-Karabakh, https://www.osce.org/mg/49237.
2. Haykakan owsowmnasirowt'yownneri «Ani» kentron, Madridyan skzbownqner – amboghjakan teqst /“Ani” Center for Armenian Studies, Madrid Principles - Full Text/, https://www.aniarc.am/2016/04/14/madrid-principals-armenian-text/.
3. Madridyan skzbownqnery' Hayastany' y'ndownel e' banakcowt'yownneri himq. Sargsyan /Armenia accepted the Madrid principles as a basis for negotiations: Sargsyan/, https://www.aniarc.am/2016/12/28/serzh-sargsyan-28-december-2016/.
4. Adrbejani naxagah Ilham Ali&i tvac' harcazrowycy' adrbejanakan ZLM-nerin 2010t'. hownisi 8-in Stambowlowm /The interview given by the President of Azerbaijan Ilham Aliyev to the Azerbaijani mass media in 2010, on June 8 in Istanbul/, https://ria.ru/20100609/244297340.html.
5. Madridyan skzbownqnery' any'ndowneli en Gharabaghi hamar /The Madrid principles are unacceptable for Karabakh/,https://www.azatutyun.am/a/25472849.html.
6. Ar'canc harcowpatasxan AH varchapet Arayik Harowt'yownyani het #2 - mas 3 /Online question and answer with Prime Minister of the Republic of Artsakh Araik Harutyunyan #2 - part 3/, https://www.youtube.com/watch?v=d8VB_uENrBs. Ditel harcazrowyci 5r. 27v. – 6r. 01v. hatvac'y' /Watch the 5 min. 27 sec. - 6 min. 01 sec. section of the interview/.
7. Ler'nayin Gharabaghi Inqnavar Marzi bnakchowt'yan t'vaqanaki dinamikan y'st azgowt'yan` mardahamarneri ardyownqnerov /Population dynamics of the Nagorno-Karabakh Autonomous Region by nationality according to census

results/, http://census.stat-nkr.am/nkr/pervaya_perepis.pdf; Naseleniye Nagornogo Karabakha, Nagorno-Karabakhskaya AO /Population of Nagorno-Karabakh, Nagorno-Karabakh Autonomous Region/ (1989), http://www.ethno-kavkaz.narod.ru/rnkarabax.html.

8. Akt o rezul'tatakh referenduma o nezavisimosti Nagorno-Karabakhskoy respubliki /Act on the results of the referendum on the independence of the Nagorno-Karabakh Republic/, https://nashasreda.ru/akt-o-rezultatax-referenduma-o-nezavisimosti-nagorno-karabaxskoj-respubliki/.
9. Arcaxi Hanrapetowt'yan varchapet & pashtpanowt'yan petakan komitei naxagah R'obert Qocharyani 1994t'. hownvari 10-i harcazrowycy' “Момент истины” r'owsalezow haghordasharin /The interview of the Prime Minister and the Chairman of the State Defense Committee of the Republic of Artsakh Robert Kocharyan in 1994, on January 10 with the Russian-language program "Moment istiny" (Moment of truth)/, https://www.youtube.com/watch?v=N8hkL04gVNA. Ditel harcazrowyci 3r. 00v. - 3r. 18v. hatvac'y' /Watch the 3 min. 00s. - 3 min. 18s. section of the interview/.
10. Haykakan owsowmnasirowt'yownneri «Ani» kentron, R'obert Qocharyani Arcaxyan karmir gc'ery'. Lachini negh hoghashert+naxkin LGhIM /“Ani” Center for Armenian Studies, Robert Kocharyan's Artsakh Red Lines. Lachin narrow strip of land + former Nagorno-Karabakh Autonomous Region/, https://www.aniarc.am/2020/04/22/robert-kocharian-al-jazeera-2006-nk/.
11. HH errord naxagah Serjh Sargsyani 2010t'. marti 22-i harcazrowycy' siriakan “Al Watan” t'ert'in /The interview of the third president of the Republic of Armenia Serzh Sargsyan with the Syrian “Al Watan” newspaper in 2010, on March 22/, https://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2010/03/22/news-46/.
12. HH errord naxagah Serjh Sargsyani 2016t'. noyemberi 17-i harcazrowycy' “Россия сегодня” mijazgayin lratvakan gorc'akalowt'yan glxavor tno'ren Dmitri Kiselyovin /The interview of the third president of the Republic of Armenia Serzh Sargsyan

with Dmitry Kiselyov, general director of the international news agency "Россия сегодня" ("Russia Today"), in 2016, on November 17/, https://www.youtube.com/watch?v=uSKWnz7ajqE. Ditel harcazrowyci 11r. 50v. – 14r. 30v. hatvac'y': Harcazrowyci sghagrowt'yowny'. /Watch 11 minutes of the interview. 11 min. 50s. - 14 min. 30s. section of the interview. Transcript of the interview/: https://armeniasputnik.am/20161117/serj-sargsyan-5509588.html.

13. Gazeta “Komsomol'skaya pravda” (1992), Moskva, 5 marta /Newspaper “Komsomolskaya Pravda” (1992), Moscow, March 5/, p. 2.
14. Nagornyy Karabakh v 1918-1923gg. (1992), Sbornik dokumentov i materialov, Yerevan /Nagorno Karabakh in 1918-1923 (1992): Collection of documents and materials, Yerevan/, “Publishing House of the Academy of Sciences of Armenia”, doc. N 472, p. 669-670.

Степан Асан-Джалалян, Эдуард Зограбян

Статус бывшего НКАО и освобожденных территории в мадридских принципах

Заключение

Ключевые слова и фразы: *“мадридские принципы”, Республика Арцах, референдум, НКАО, перепись населения, независимые международные наблюдатели, телепрограмма “Момент истины”, телекомпания “Аль-Джазира”, газета “Al Watan”, международное информационное агентство “Россия сегодня”, газета “Комсомольская правда.*

Цель статьи, заключается в том, чтобы выявить формулировки предъявленные Минской группой ОБСЕ сторонам конфликта в рамках “мадридских принципов”, которые противоречат национальным и государственным интересам Республики Арцах, на основе источников, связанных с данным вопросом.

Для достижения поставленной цели были предложены следующие задачи: 1. какие основные предложения закреплённые в "мадридских принципах", на основе которых должен был урегулироваться азербайджано-арцахский конфликт?, 2. какие позиции имели стороны конфликта по отношению к "мадридским принципам"?, 3.

какой статус должна была получить бывшая Нагорно Карабахская Автономная Область и освобождённые территории согласно "мадридским принципам"?, 4. как армяне Арцаха реализовали бы свое право на самоопределение в соответствии с «мадридскими принципами»?, 5. какова была позиция бывших президентов Республики Армения относительно будущего статуса Нагорно-Карабахской Автономной Области и освобожденных территорий?.

Статья написана путем сопоставления, сравнительного и экспертного анализов соответствующих документов.

В результате совместного изучения фактов и документов по данному вопросу мы пришли к выводу, что документ, известный как «мадридские принципы», представленный Минской группой ОБСЕ сторонам конфликта с целью урегулирования азербайджано-арцахского конфликта во многом противоречит национальным и государственным интересам Республики Арцах.

Stepan Hasan-Jalalyan, Eduard Zohrabyan

Status former NKAR (Nagorno Karabakh Autonomous Region) and the liberated territories in the madrid principles

Conclusion

Key words and phrases: *“madrid principles”, Republic of Artsakh, referendum, NKAR, population census, independent international observers, TV program “Момент истины”, TV company “Al-Jazeera”, newspaper “Al Watan”, international news agency “Россия сегодня”, newspaper “Комсомольская правда”.*

The purpose of the article, based on the sources related to the issue, is to find out the claims against the national and state interests of the Republic of Artsakh in the "madrid principles" presented by the OSCE Minsk group to the conflict parties for the purpose of settlement of the Azerbaijan-Artsakh conflict.

In order to achieve the set goal, the following issues were put forward: 1. what are the main recommendations laid down in the "madrid principles" on the basis of which the

Azerbaijan-Artsakh conflict should be settled?, 2. what position did the parties to the conflict have regarding the "madrid principles"?, 3. what status would be given to the former Nagorno-Karabakh Autonomous Region and the liberated territories under the “madrid principles”?, 4. how would the Armenians of Artsakh exercise their right to self-determination with the “madrid principles”?, 5. what was the position of the former presidents of the Republic of Armenia regarding the future status of the Nagorno Karabakh Autonomous Region and the liberated territories?

The article is written by means of comparison and comparative study of relevant documents and examination analysis.

As a result of the joint examination of facts and documents related to the issue, we came to the conclusion that the document known as "madrid principles" presented by the OSCE Minsk group to the conflict parties for the purpose of settlement of the Azerbaijan-Artsakh conflict is mostly against the national and state interests of the Republic of Artsakh.

Ստեփան Հասան-Ջալալյան *- «Հասան-Ջալալյանների խորհուրդ» պատմամշակութային, ազգագրական ՀԿ նախագահ, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության մագիստրոս: Գիտական հետաքրքրությունները՝ Արցախի պատմություն, ադրբեջանաարցախյան հակամարտության ծագում և կարգավորման ուղիներ: Հեղինակ է երկու մենագրության, շուրջ երեք տասնյակ գիտական հոդվածների: Hasan-Jalal@yandex.com*

Էդուարդ Զոհրաբյան *– ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ, պ. գ. թ., դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ Հայաստանի և հարակից երկրների պատմություն, գիտության պատմություն, հասարակության սոցիալական կառուցվածքի պատմություն, կովկասի պատմության աղբյուրագիտություն և պատմագրություն: Հեղինակ է երկու մենագրության, շուրջ վեց տասնյակ գիտական հոդվածների:*

Степан Асан-Джалалян *- Председатель историко-культурной, этнографической общественной организации «Совет Асан-Джалалянов», ЕГУ, факультет международных отношений, магистр политологии. Научные интересы: История Арцаха, истоки азербайджано-арцахского конфликта и пути урегулирования. Автор двух монографий, около трех десятков научных статей.* Hasan-Jalal@yandex.com

Эдуард Зограбян *- Заведующий кафедрой "Истории соседних стран Армении" ЕГУ, к. и. н., доцент. Научные интересы: история Армении и соседних стран, история науки, история социальной структуры общества, источниковедение и историография истории Кавказа. Автор двух монографий, около шести десятков научных статей.*

Stepan Hasan-Jalalyan *- President of "Council of Hasan-Jalalyans" historical, cultural, ethnographic non-governmental organization, YSU, Faculty of International Relations, Master in Political Sciences. Scientific interests: History of Artsakh, Genesis of Azerbaijan-Artsakh conflict and ways of its settlement. He is author of two monographs, about three dozen scientific articles.* Hasan-Jalal@yandex.com

Eduard Zohrabyan *- Head of the Chair of the "History of the Neighboring Countries of Armenia" of the YSU, Ph.D. in History, Associate Professor. Scientific interests: History of Armenia and neighboring countries, History of science, history of the social structure of society, source studies and historiography of the history of the Caucasus. He is the author of two monographs, about six dozen scientific articles.*

Խմբագրություն է ուղարկվել 30.11.2023թ.
Հանձնարարվել է գրախոսության 05.12.2023թ.
Հրապարակման է ներկայացվել 05.06.2024թ.